Եղիշե Չարենց

Ազգային երազ

(Պոեմ երգիծական և ողբերգական

Բուրդը դրին ու գգեցին...

1

Ցերեկի վազքից, հոգսերից հոգնած՝
Տուն վերադարձա գիշերի կիսին:
Իսկույն քնեցի: Եվ մեկ էլ, հանկարծ,
Մի երազ տեսա հայ ազգի՛ մասին:
Ես չեմ հավատում ո՛չ մի երազի:
Բայց արթնանալիս վախեցա, ասի.
Վատ բան է ասում իմ երազը այս՝
Ինչ էլ որ լինի տեսիլ թե երազ
Ինչ էլ որ լինի պատմեմ աշխարհին,
Թող օրը անցնի ու հետը բարին:

2

Գիշերը գնաց, բայց երկա՛ր, երկա՛ր
Իմ սրտի վրա ծանր, որպես քար,

Մի թախիծ մնաց երազից էն մութ
Մի ճնշող թախիծ, ծանր մի խորհուրդ:
Ու մաշում է ինձ թախիծը հիմա.
Մութ, խորհրդավոր, սառը, որպես մահ
Գիշեր ու ցերեկ նվում է կարծես
Եվ խելքս արդեն կորցրել եմ ես:
Շրջում եմ մենակ օրերիս միգում,
Մխում է ցավը իմ հոգնած հոգում
Եվ չեն ամոքում էլ հույսերը սին...
Բայց ես մոռացա երազիս մասին:

3

Քնել էի խոր: Աչքերիս առաջ
Փռվել էր մի մութ, անթափանց մշուշ:
Կուրծքս բարձրանում ու իջնում էր ցած՝
Զգում էի, որ քնել եմ անուշ:
Քնել էի խոր: Եվ ահա հանկարծ
Թվաց ինձ, որ ես բարձրանում եմ վեր:
Սիրտս մի մթին տագնապով զնգաց
Ու սուր կարոտով սկսեց ցավել:
Նախ թվում էր ինձ, որ թռչում եմ ես,
Բայց տեսա հետո, որ վերը, օդում,
Կախվել է հոգիս, որպես աչք հրկեզ
Ու վարը իշխող խավարն է դիտում:
Ու սո՛ւր հաճույքից ճչում էի ես,
Բայց խորթ էր ձայնս՝ մի կարկառ հնչյուն:
Զգում էի լոկ, որ երկնի միջում
Կախված է հոգիս, որպես աչք հրկեզ:

4

Ու մութ էր շուրջս, մի մթին գիշեր:
Աշխարհը հեռուն քնել է լռին:
Երկնքից կախված նայում էի ես
Վարը տարածված երկրի խավարին:
Սկզբում ոչինչ դեռ չէր երևում.
Խավար էր միայն, մառախուղ ու մութ:
Բայց հետո հանկարծ հեռու-հեռևում
Կարմիր բռընկեց մի կրակ աղոտ:
«Հիվանդ կա» ասի մտքիս մեջ ինձ ես.
«Հիվանդի համար կրակ վառեցին»:
Ու միտք անելով ինքս ինձ էսպես
Նայում էի ես այդ կարմիր կայծին,
Երբ նրա կողքին, հապշտապ, արագ,
Տագնապով վառվեց մի ուրիշ կրակ:
Հետո մոտեմոտ, իրար հետևի՛ց
Ուրիշ կրակներ վառվեցին նորից
Ու ծուխ բարձրացավ, ու հրդեհ, ու բոց.
Հսկա լեզուներ վառվեցին միգում
Եվ մեկը ասաց իմ քնած հոգուն,
Որ վառվում է ողջ երկիրը Հայոց...

5

Ու, ծուխ շնչելով արնագույն մուժում,
Նայում էի ես վառվող հրդեհին
Եվ տեսնում էի՝ վարը, մշուշում

Վառվում է ահա մեր երկիրը հին:
Եզերքից-եզերք հրդեհը դեղին
Գրկել էր Հայոց աշխարհը, ու նա
Անկամ հանձնված կարմիր հրդեհին
Վառվում էր հսկա քուրայի վրա:
Արևի հսկա մի շողքի նման
Ջարկել էր բոցը Արարատ սարին,
Որ վառվում էր տոթ, պարում ալվլան,
Ողջակեզ դարձած խավար աշխարհին:
Ու լուռ էր այնպես. ձայն, շշուկ չկար.
Կանգնել էր կարծես ժամանակը քար,
Որ հրդեհը այդ հավիտյան տևի...
Կրակահանդես, տոն էր երևի
Տոթ, արնակրակ հրդեհը այդ վառ
Աշխարհի համար մարդկության համար...

6

Նայում էի ես սրտով հրատապ
Ու թարթում էին աչքերս մխից
Երբ տեսա հանկարծ, որ մեկը, շտապ,
Փախչում է ահա հրդեհի տեղից:
Հրդեհի կարմիր լույսով ողողված՝
Կարմիր էր թվում թուխ դեմքը նրա:
Վազում էր, գլուխն ու ճակատը բաց,
Ե՛վ աչքերը իր կրակի քուրա
Բոցկլտում էին քինոտ ու դաժան.
Եվ շրթունքներով թուխ ու ալևոր
Մոմռում էր նա, երդվում էր նա, որ
Չի՛ դրժի երբեք ուխտը սրբազան:

Ո՞ւր էր նա փախչում և ինչո՞ւ համար,
Ինչո՞ւ էր վազում ու երդում անում:
Քարոտ էր ուղին, հրդեհ ու խավար,
Բայց վազում էր նա, չէր հանգստանում:
Երբեմն միայն թաշկինակը իր
Մոտեցնում էր շրթերին կարմիր
Ու շրթին սեղմած ձյուն-թաշկինակում
Խեղճը հազալով արյուն էր թքում:
Եվ նորից, պարզած զույգ ձեռքերը վեր,
Հերոսի նման անփույթ, անձնվեր
Վազում էր առաջ ու երգ էր երգում
Վրեժաժպիտ ու մահագուշակ
Ու ծածանվում էր նրա աջ ձեռքում
Թաշկինակը իր, որպես դրոշակ...

7

Երբ հուրը մնաց սարի ետևում
Կանգ առավ մի պահ այդ մարդը հանկարծ,
Երկչոտ աչքերով նա զննեց հեռուն
Բայց չէր երևում կրակի մի կայծ:
Խորունկ շունչ քաշեց ու նստեց քարին:
Մի-երկու վայրկյան սպասեց լռին.
Գիշեր էր շուրջը, խաղաղ ու հանդարտ:
Եվ ահա, որպես փորձված մի մարդ,
Մատները դրեց շրթունքների մեջ
Եվ երկու անգամ բարձր, զի՛լ սուլեց:
Եվ ահա մեկ-մեկ, իրար հետևից,
Դուրս եկան նրա ընկերները քաջ,
Մոտեցան նրան, բռնեցին թևի՛ց

Ու հուզված՝ կեցան ընկերոջ առաջ:
Ի՞նչ արիր, Ահո՛, հարցրին նրան:
Բայց Ահոն չուներ լեզու ու բերան.
Սրտի տրոփից չէր կարող խոսել:
Խնդրեց մի վայրկյան, մի քիչ սպասել,
Շրթերը ծամեց, բարձրաձայն հազաց
Ու հուզված ձայնով նա այսպես ասաց.
«Հորիզոններում տիեզերական,
Ուր աստղ ու լուսին բոցկլտում են վառ,
Աշխարհում այս մութ, նենգ ու խոլական
Ո՛չ մի ազգ չկա հայի պես թշվառ...»:
Լավ, ճառ մի՛ խոսիր, մենք այդ չենք ուզում,
Գիտենք, որ ճառեր դու լավ ես խոսում.
Դու մեզ այն ասա՝ ի՞նչ արիր, Ահո՛,
Ճառերը հետո, խոսքերը հետո:
Դու, որ քաջ ես միշտ, շիտակ, անսասան
Կատարի՞ր արդյոք պարտքդ սրբազան:
Իհարկե, տղերք... ի՛նչ խոսք այդ մասին.
Ձեռքը դնելով ընկերոջ ուսին
Նորից սկսեց Ահոն քաղցրաձայն
(Այդ մարդը ուներ այնպիսի մի ձայն,
Որ եթե խոսեր մի մութ փողոցում
Կասեիր՝ այնտեղ սրինգ են ածում...)
« Վառվում են այնտեղ երեխա ու կին...»:
Բայց ընկերները խզեցին կրկին
Խոսքերը նրա: «Ի՞նչ արի՛ր, ասա,
Պատմիր սկզբից եղածը գործի»:
Ու պատմեց Ահոն. «Հենց որ տեղ հասա
Առաջին գյուղում հրդեհը գցի:
Խավար էր, տղերք... ի՞նչ իմանայի...
Դուրս եկավ սակայն, որ... գյուղ է հայի...
Բայց էս դեռ ոչինչ, դեռ ոչի՛նչ, տղերք.
Այն էր՝ հավաքվել մարում էինք մենք՝

Ջուր էինք լցնում կրակի վրա
Տեսնենք հարևան տեղերից ահա
Օգնության եկավ գյուղը դրացի.
Լավ է, կմարենք, մտքումս ասացի
Մեկ էլ էն տեսա, որ կրակը թեժ,
Որպես մի վիշապ, ագահ մի հրեշ,
Հնոցի նման բռնկվեց միգում...
Ու գյուղը մնաց կրակի գրկում:
Եվ մենք հասկացանք, որ մեր դրացին
Քարյուղ է լցնում մեր փոքրիկ կայծին...
Ու կայծը ահա մի հրդեհ դառավ
Այսպես մեզ խաբեց դուշմանն անիրավ...
Ու քամի ելավ, մոնչաց ահեղ
Կրակը ցրեց, տարավ ուրիշ տեղ,
Այդտեղից վառվեց գյուղը հարևան
Ու ծուխ բարձրացավ, ու հրդեհ, ու բոց,
Նայեցի՛ մեկ էլ հրդեհի նման
Վառվում է, տեսնեմ, աշխարհը հայոց...
Կրա՛կ է այնտեղ, ու հրդեհ, ու մահ
Հայոց աշխարհում հրդեհ է հիմա»:
Ու լռեց Ահոն: Ու բարձր հազաց:
Ձայրույթը մի պահ խեղդեց բոլորին:
Եվ ահա նրանց Վետերանը հին
Վեր թռավ տեղից ու խռպոտ ասաց,
« Վայրկյանը խփեց... Օ, այո՛, այո՛...
Կռիվ ու վրեժ, չսպասենք իզուր:
Մենք մնանք այստեղ դու գնա, Ահո՛,
Հայոց աշխարհի ահազանգը տուր»:

Ու նորից Ահոն ընկավ ճանապարհ:
Գիշեր էր շուրջը, ահռելի խավար,
Բայց վազում էր նա ու չէր սայթաքում.
Այնպես էր գնում խավարի գրկում,
Որ տանն էր ասես, գորգերի վրա
Սովոր էր մթին հայացքը նրա:
Մի անգամ միայն խեղճը սայթաքեց
Բայց խոպոտ հազաց, արնագույն թքեց
Եվ իսկույն նորից նա ոտքի թռավ.
Մի զարմանալի աշխույժ էր, իրավ,
Որ ուներ կյանքում այդ մարդը հիվանդ
Մի զարմանալի, հանճարե՛ղ եռանդ:
Ես մտածեցի՝ «Ազնի՛վ ծերունի,
Խեղճը թոքերի բորբոքում ունի,
Բայց իր աշխույժով պատանի է դեռ
Գիտե սրբազան պարտքը կատարել:
Քո այդ անձնվեր եռանդի համար
Քեզ փառք ու պատիվ, հիշատակ անմար:
Ով չի օրհնում քեզ սրիկա է նա:
Եվ ո՞վ չի ների, եթե իմանա,
Որ դու մի չնչին սխալ ես արել
Ներանց գյուղի տեղ մեր գյուղն ես վառել...
Օ, այո, Ահո՛, ազնի՛վ ծերունի՛.
Ով գործ է անում նա սխալ ունի,
Անսխալ մարդիկ աշխարհում չկան
Աստված է միայն անսխալական...»:

Մինչ վազում էր նա դաշտում ամայի,
Ուր մութ էր ու մուժ, մշուշ էր մահի,
Ճամփին մնացած ընկերները հին
Սարի տակ նստած սպասում էին:
Վառվող սրտերով, աչքերը կրակ,
Խավարի գրկում նստոտած նրանք
Մտորում էին աղետի մասին.
Եվ ահա, քինոտ ժպիտն երեսին,
Վեր թռավ տեղից Վետերանը ծեր
Եվ ազդու ձայնով սկսեց խոսել.
«Ընկերներ, ասաց, եղբայրներ անգին,
Վառվո՛ւմ է հայոց աշխարհը կրկին...
Հասկանո՞ւմ եք դուք մտքով վերահաս,
Թե ի՞նչ են ասում կարճ խոսքերը այս...
Հայոց աշխարհում հրդեհ է կրկին...
Այսինքն այնտեղ երեխա ու կին
Վառվում են հիմա անխիղճ կրակում
Ու կյանք են հայցում, ու կյանքի փրկում:
Ընկերնե՛ր, սակայն խոսքերը այս խուլ
Որքան էլ հնչեն անհույս ու տխուր,
Ընկերնե՛ր, այս սև խոսքերում անգամ
Մի բան կա՝ անչա՛փ մխիթարական.
Դուք տեսաք կարծեմ, որ մի քիչ առաջ,
Դեպի հեռավոր ուղիներն հառած
Իր աչքերը սև, կրակոտ ու վառ
Մեր ընկեր Ահոն ընկավ ճանապարհ:
Ես դեռ չեմ ուզում շեշտել, որ նրա
Գոյությունը լոկ մեր երկրի վրա
Կբավե արդեն, որ ցրե իսկույն
Ամեն մի անմիտ հուսահատություն...
Եվ ո՞վ չըգիտե նրա փառքը մեծ.
Նա որ տեղ հասավ ու զանգը տվեց,

Զանգը մարտակոչ, աշխարհասասան
Կհիշեն իսկույն ուխտը սրբազան
Ու եզերքներից, կողմերից հեռվի
Դուրս կգան նորից մի ահեղ կռվի,
Եվ մենք, անվհատ, անվախ, անձնվեր
Կերթա՞նք փրկելու ժողովուրդը մեր...
Ու շունչ կքաշե մեր ցեղն արնաքամ
Օ, ա՞յս է ահա մխիթարական.
Օ, ստրուկ է նա, ով որ սիրտը դող,
Յուր կյանքի համար կռվել չի կարող:
Նա՞ է այս կյանքում ապրելու արժան,
Ով աստվածային ցասումով դաժան
Գիտե թշնամու արյունը քամել.
Ով գիտե նրա արյունը խմել,
Նա չի հալածվի գերության ներքո.
Կռվով կգտնես իրավունքը քո...»:
Շատ ես աղմկում, ընկեր Վետերան,
Ձայն տվեց հանկարծ ընկերը նրան
Ու թռավ, կանգնեց մի քարի վրա.
Լեգեոն էր հին անունը նրա
(Որ թե թարգմանել դուք կարողանաք՝
Հայերեն լեզվով կլինի «բանակ»):
Դողում էր նրա մարմինը ամբողջ.
Բարձր քրքջալով խոսքին ընկերոջ՝
Խոսել էր ուզում, չէր կարողանում.
Խեղդում էր նրան զայրույթը անհուն:
Բայց զսպեց իրան, զայրացկոտ հազաց
Ու հզոր ձայնով հաղթ, հաստատ ասաց.
«Ես չեմ հավատում ձեր սին խոսքերին.
Չեմ կարող լինել խոսքերի գերին.
Հայո՛ց աշխարհում արյուն է հոսում
Դուք կանգնել այստեղ ճառեր եք խոսում...
Ո՞չ, ես չեմ կարող: Ես ասում եմ, որ

Ամենից առաջ գործ է հարկավոր:
Դուք կանգնեք այստեղ դաշտում ամայի.
Ես կերթամ ահա երկիրը մահի,
Կգոհեմ ա՛յնտեղ ես իմ կյանքը, ինձ,
Գուցե և մեկին փրկեմ կրակից...»:
Եվ ճիշտ որ, իսկույն, առանց նայելու,
Նա ճամփա ընկավ՝ իր խոսքին հլու:
Վետերանն ուզեց կանչել, համոզել,
Բայց ընկերն արդեն կորել էր, չկար:
Եվ նա վերստին սկսեց խոսել,
« Ես խենթ չեմ, ասաց, կույր ու խելագար.
Իմ սիրտն էլ, ասաց, այդպես է ուզում
Բայց կա սառը միտք, քարե համոզում,
Որ շտապելով ոչինչ չես անի
Քամու բերածը քամին կտանի...»:
Եվ այդպես, հուզված, զայրույթը հոգում,
Աչքերում կրակ, թույն ու բորբոքում
Նա դեռ շատ կանե՛ր վեճ ու դալմաղալ,
Բայց երկինքն հանկարծ սկսեց դողալ:
Դողում է՛ր կարծես երկինքը ամբողջ...
Վետերանը ծեր քար կտրեց ասես.
Շշնջաց միայն շրթերով դողդոջ.
Տղերք, Ահոյի ահազանգն է էս...

10

Եվ ճիշտ որ. անհուն գիշերի գրկում
Մոնչում էր խուլ, ողբաձայն երգում,
Ու հոսում էր հորդ ձայնի մի հոսանք.
Ճչում էր կարծես վիթխարի մի զանգ:

Ու ողողանջները գիշերի գրկում
Մագլցում էին հորիզոնն ի վեր:
Ես մտածեցի՝ մինչ հիմա կյանքում
Ով է այսպիսի ահազանգ տվել,
Որ արթնացնի քուն մտած մարդուն...
Բայց հարցս թվաց սրբապղծություն:
Օ, ո՜չ մի ժամկոչ չի զանգել այդպես,
Թեկուզ հրդեհներ շատ է պատահել:
Չէ՞ որ ազգը մեր քնած է ասես
Մեր քնած ազգին այդպես է վայել...
Այս զանգը ազգիս թող խրատ լինի,
Որ արթուն մնա, որ էլ չքնի...
Մինչ ես, դողալով տերևի մի պես,
Միտք էի անում ինքս ինձ այսպես
Ու նայում էի իմ մութ անկյունից
Ժողովուրդն ահա արթնացավ քնից:
Ամենից առաջ մեծերն արթնացան:
Եվ ահա շտապ, խմբերով ցիր-ցան,
Բոլոր կողմերից եկան կրակուն
Ու հավաքվեցին զանգատան բակում:
Ամենից առաջ մի խենթ էր հասել
(Անունը նրա չեմ ուզում ասել)
Զարթնել էր թե չէ՝ գիշերի մթում
Վազել էր իսկույն դեպի զանգատուն:
Եվ ահա, անմահ հերոսին վայել
Անմար եռանդով զանգում էր նա էլ:
Եվ ժողովրդի զարթնելու հուսով
Ջիլ զանգում էին նրանք երկուսով:
Ու նրանց հուժկու ձեռքերի տակին
Դղրդում էին զանգերն ահագին,
Դողում էր նաև զանգատունն ամբողջ
Ու ձայն էր կտրել հորիզոնը ողջ:

11

Վերջապես նրանք, երբ քիչ հոգնեցին,
Ժպտացին իրար ու վար նայեցին:
Ու սիրտը նրանց խնդաց զնգոցով,
Երբ տեսան նրանք բազմությունը ծով,
Որ վարն հավաքված իրենց էր նայում
Հերոսնե՛ր էին նրանք այդ պահուն...
Ծփում էր այնտեղ բազմությունը հոծ.
Հավաքվել էին մեծերը հայոց,
Ու աչքերն հառած դեպի զանգատուն
Աղմկում էին գիշերի մթում:
Աղմուկը սակայն երկար չտևեց.
Բարբառեց հանկարծ խենթը վերևից
Ու տիրեց իսկույն լռությունը քար,
Կարծես ներքևում ոչ մի մարդ չկար:
Աղբյուրի նման կարկաչուն ու հորդ,
Մերթ մեղմ ու անուշ, մերթ անչափ խրոխտ,
Մերթ ինչպես վերից փոթորիկ սուրա
Հոսում էին վար խոսքերը նրա...
Ու այս էր ասում այդ մարդը վերից.
« Ընկերներ, հայոց աշխարհում նորից
Կրակ է ընկել, ու մրրիկ, ու մահ.
Ընկե՛րներ, համառ խմբերով հիմա
Մենք պետք է իսկույն, անվախ, անվեհեր,
Երթա՛նք փրկելու ժողովուրդը մեր:
Գիտեմ, ձեր սրտում տիրում է հուզում.
Դուք անշուշտ հիմա գտնել եք ուզում:
Թե ո՞վ է նորից աշխարհը վառել,
Կամ մինչև հիմա մենք ի՞նչ ենք արել

Մեր ժողովուրդը փրկելու համար.
Որպեսզի հարցը չմնա խավար
Ու ոչ մի գաղտնիք մեր մեջ չմնա
Ամեն ոք թող այս խոսքերս իմանա»:
Եվ նա սկսեց պատմությո՛ւնը հին.
Ո՞վ չի իմացել, որ մեր թշնամին
Խաբող է ու նենգ, ու վախկոտ, ու մութ.
Եվ ասում էր նա. «Ոչ մի ժողովուրդ
Չի սիրում խարդախ թշնամուն մեր չար,
Այնինչ ազգը մեր աստվածահանճար
Զարմանք է լցնում սրտում բոլորի
Իր բախտով դաժան ու կռվով արի:
Այո, ընկերնե՛ր: Աշխարհը՝ ամբողջ
Ողբում է հիմա աղետը հայոց,
Չի կարողանում մեր վշտից քնի,
Ուզում է մի կերպ, մի բանով օգնի,
Ու իր հեռավոր, լուսավոր ափում
Մեր վշտի համար արցունք է թափում:
Հայրենակիցնե՛ր, թե ամեն մի մարդ
Թափելու լինի մի շիշ արտասուք
Մեր երկիրն էլի՛ կխնդա զվարթ
Ու էլ չի լինի ավերում ու սուգ:
Հայրենակիցներ, հաշվել եմ, գիտեմ,
Եվ երդվում եմ մեր հրդեհովը վառ,
Արտասուքն այդքան կբավե արդեն
Մի փոքրիկ հրդեհ մարելու համար:
Եվ հետո երեկ, երբ խղճով հանգիստ
Քնել էիք դեռ բոլորդ անխռով
Մեր անզուգական բարեկամներից
Զուր ենք պահանջել մենք հեռագրով:
Սակայն մինչև գա օգնությունը այդ
Ով մի սուր առած, ով թեկուզ մի փայտ,
Շարքերով անծայր, ստվար, բազմահոծ

Երթա՛նք փրկելու ժողովուրդն հայոց...»:

12

Երբ ձայնը նրա խզվեց զնգոցով
Վարը հավաքված բազմությունը ծով
Մոնչաց ինչպես մի քաջ անվեհեր.
Էրթա՛նք փրկելու ժողովուրդը մեր:
Քիչ մնաց վերից մոնչամ ես էլ.
Իմ ամբողջ կյանքում ես չէի տեսել
Մեր ճղճիմ կյանքի անթափանց մթում
Այդպիսի անկեղծ ոգևորություն:
Եվ աչքս հառած հուզված ամբոխին՝
Ես կծում էի շրթունքները իմ,
Նման էր ողջը երազի, քնի.
Վախենում էի, որ երազ լինի...
Տեսնելով սակայն, որ չեմ արթնանում,
Խո՛ր ակնածանքով, հարգանքով անհուն
Ես մտածեցի. աշխարհում այս մութ
Ինչե՛ր չի անում ժամկոչը հմուտ...
Անհասկանալի հրաշք ես դու, կյանք,
Բավական էր մի ազդու ահազանգ
Եվ փրկվեց ահա մեր ազգը մահից:
Եվ չէի ուզում հավատալ ես ինձ,
Բայց երբ որ մեկ էլ նայեցի ես վար
Չհավատալու էլ հնարք չկար:
Չռած աչքերով տեսնում էի ես.
Ներքևում ահա, հրձիգներ ասես.
Ձեռքերին կարմիր լապտերներ առած
Մեր խենթն ու Ահոն ընկել են առաջ

Հետքերից գցած բազմությունը հոծ
Գնում են փրկեն ժողովուրդն հայոց...

13

Ու զարմանք կտրած, սրտիս խնդություն,
Ես նայում էի չէի հավատում
Բախտից կուրացած իմ թաց աչքերին.
Եվ արցունքները հորդ հոսում էին
Ճամփեքի վրա նրանց սրբազան...
«Երանի՛ նրանց, որ ձեզ չտեսան,
Բացականչեցին շրթերս դողդոջ.
Քանի որ նրանք աշխարհում այս փուչ
Չեն տխրի հետո, երբ դառնա երազ
Ոգևորության սուրբ վայրկյանը այս...»:
Ու գնում էին նրանք անձնվեր,
Ունեի՛ն կարծես քաջության թևեր...
Նույնիսկ գիշերի միգում անթափանց
Ես տեսնում էի թևերը նրանց,
Որ տանում էին թափորն անվեհեր
Աստվածաընծա, սրբազա՛ն թևեր:
Խավար գիշերի գրկում ահավոր
Քայլում էր նրանց խումբը թևավոր,
Գնում էր դեպի երկիրը հրի
Մի խումբ էր կարծես հրեշտակների...

14

Եվ ահա նրանց աչքերի առաջ
Հեռուն, մշուշում բռնկվեց հանկարծ
Վառ, արնանման կրակի մի դեզ,
Մի հսկայական լեզու էր ասես
Ու մութ գիշերի լնդերքն էր լիզում
Այդ հսկայական, այդ կարմիր լեզուն:
Ու աչքերն հառած լեզվին հրածին
Նրանք քարացան ու սուր զգացին
Վառվող դիերի բույրը ահավոր...
Լսեցին նրանք կանչեր հեռավոր,
Ճիչեր տխրաձայն ու աղեկտուր,
Որ կանչում էին ու տանջում իզուր...
Եվ ահա, հրե այն լեզվի նման,
Բռնկվեց նրանց սրտում անձնվեր
Ազնիվ վրեժի ու ատելության
Թույնը սրբազան ու աշխարհավեր:
Եվ այն է՝ նրանք ուզում էին որ
Անցնեն անիծված սահմանն ահավոր
Եվ նետեն իրենց հրդեհը անանց
Մշուշում հանկարծ դեմ ելան նրանց
Խմբեր կիսամերկ ուրվականների,
Որ փախչում էին ճանկերից հրի...
Ու փախչում էին նրանք քայլերեր.
Կիսամեռ մարդիկ, կիսավառ կիներ
Ու ծերունիներ տեսիլանման.
Հայոց աշխարհի ժողովուրդն էր այն,
Որ ահաբեկված սրից ու հրից
Փախչում էր անդարձ հայոց աշխարհից.

Երբ նրանք այդ սև պատկերը տեսան
Հրաբուխ դարձավ քենը սրբազան
Նրանց անվեհեր ու վեհ սրտերում.
Եվ ահա, այդ սուրբ զայրույթով եռուն
Ու մռնչյունով աշխարհասասան
Մի թռիչք արին ու հրին հասան:
Տեղ հասան տեսան շատ են ուշացել.
Իրենցից առաջ շատերն են հասել
Ու իրենց նետած կրակի մեջ վառ
Աշխատում են մի եռանդով անմար.
Կրակի միջից իրեր են հանում
Եռանդով անմար, աշխույժով անհուն:
Նայում էր Ահոն վառվող կրակին
Եվ ահա այնտեղ նա տեսավ մեկին,
Որ իրեն նետած կրակը անել
Ուզում էր մի բան հրդեհից հանել:
Ճանաչեց նրան ու շշմած մնաց...
Ու թվաց նրան, թե ինքը քնած
Երազ է տեսնում ընկերոջ մասին...
Բայց երբ որ տեսավ ընկերոջ ուսին
Բոցը, որ նրան ուզում էր լափի
Բղավեց խզված ձայնով տագնապի.
Հե՛յ-հե՛յ, դո՞ւրս արի, Լեգեոն եղբայր:
Բայց չէր լսում նա: Նույն ջանքով անմար
Կրակի տակից քաշում է մի բան
Ու նայում էին բոլորը նրան:
Օ, սաղամանդրա առասպելական,
Հայը իր փառքով քեզ է պարտական.
Աղաղակեցի ես ձայնով հուզված
Բայց նա նույն պահուն ձեռքերով կիզված
Դուրս քաշեց հրից այլանդակ, դեղին
Մի անմիս դիակ ու մի անկողին:

Երբ դուրս եկավ նա ու բեռը դրեց
Դեմ վազեց Ահոն, ամուր համբուրեց
Ու անհուն սիրով փաթաթվեց նրան.
Օ, ցնցող սիրո ցնցող տեսարան...
Ահոն երևի դեռ երկա՛ր-երկա՛ր
Ընկերոջ կրծքին փաթաթված մնար,
Բայց ընկերը շատ չուներ ժամանակ՝
Սերն համարելով անտեղի հանաք՝
Մեղմ հրեց նրան ու հոգնոտ, լռին
Մոտեցավ հրից ազատված իրին:
« Դե, պատմի՛ր, պատմի՛ր, այս ի՞նչ ես անում:
Մեղքս ի՞նչ պահեմ. ես չեմ հասկանում
Գցել ես դու քեզ այդ կրակն անել...
Բայց հրի միջից այդ ի՞նչ ես հանել...»:
Ու տխուր ժպտաց Լեգեոնը ծեր.
« Դիակ է, ասաց, մեռած աղջկա.
Դիակներ են լոկ այստեղ մնացել
Ուրիշ ժողովուրդ այս երկրում չկա...»:
Բայց դու, Լեգեոն, դու ի՞նչ ես անում:
Կրակի միջից ես բուրդ եմ հանում...
Բայց ինչո՞ւ համար, Լեգեոն ընկեր...
« Ախ, Ահո՛, Ահո՛ ... Մեծ աղետը մեր
Պե՞տք է վերջապես մի կերպ մեղմանա...
Դուք ի՞նչ գիտեք որ... Ես ներկա եղա
Մեր ժողովրդի սոսկալի բախտին.
Ես ներկա եղա հայ ազգի գաղթին
Եվ համոզվեցի, հասկացա ես, որ
Ամենից առաջ բուրդ է հարկավոր
Մեր անտերացած, որբ ժողովրդին.
Միթե՞ չգիտես, որ ձմռան ցրտին
Նա դաշտում թափված, անտեր պիտ մնա
Բաց դաշտի վրա, ձյունների վրա
Ու պետք է մեռնի անտուն ու անտեղ

Ո՞վ կտա նրան անկողին այնտեղ...
Է, ես խոսելու չունեմ ժամանակ.
Գործ է հարկավոր և ո՛չ թե հանաք:
Եվ դու էլ, Ահո, ասա բոլորին,
Որ իմ հետևից հանձնվեն հրին՝
Բուրդ-բամբակ հանեն կրակի տակից
Իսկ երբ հանեցինք բուրդը կրակից՝
Կերթանք, կգտնենք ժողովուրդը մեր
Եվ բուրդ կտանենք մենք նրան նվեր:
Եվ ժողովուրդը մեր որբ, արնաքամ,
Բուրդը գնելով մեր կյանքի գնով
Հանգիստ կքնի առաջին անգամ
Մի եղեմական, մի անո՛ւշ քնով...»:
Երբ Ահոն այս մեծ խոսքերը լսեց
Ընկերոջ առաջ խոնարհվել ուզեց
Ուզեց համբուրել ոտքերի փոշին.
Զարմացավ նրա հանճարի ուժին:
Հենց այն էր՝ իսկույն ուզում էր փորձի,
Բայց ընկերն ասաց. «Ուրեմն գործի,
Շո՛ւտ գործի անցեք. գիտեք, որ հիմա
Ձմեռ է այնտեղ, ու քամի, ու մահ,
Իսկ որբերը մեր պառկած են հողին
Մերկ... գետնի վրա... առա՛նց անկողին»:
Ու նետվեց նորից նա կրակը թեժ,
Որպես զոհ կարմիր, որպես ողջակեզ...

16

Ու հետևելով սուրբ օրինակին,
Բոլորը իրենց տվին կրակին

Ստվար խմբերով կրակը ընկան...
Ախ, գործում նրանց եռանդ կար այնքան,
Որ ես, ընկճված նրանց եռանդից,
Հայհոյում էի, ատում էի ինձ,
Որ չեմ աշխատում, չեմ գործում ես է՛լ,
Որ գիտեմ միայն երգել ու խոսել.
(Ախ, չէր մոռացել իմ խենթ սիրտը դեռ,
Որ երգիչ եմ ես... երկնքի թիթեռ...)
Աստված իմ, աստված, ի՛նչ եռանդ էր այդ:
Ես չէի տեսել այդպիսի եռանդ.
Չէի է՛լ լսել աշխարհում այս հին
Այդպիսի հսկա եռանդի մասին...
Չէր անցել գուցե և մի ակնթարթ
(Սրան են ասում իսկական եռանդ)
Կրակի մե՛ջ էլ բուրդ չէր մնացել.
Ե՛վ հանել էին, և հարմար բարձել
Ձիերի վրա բուրդը արնակեզ.
Այն արնոտ բրդի մի քարվան էր մեծ,
Որ ճամփա ընկավ երգով հաղթական
Դեպի հեռավոր վայրը գաղթական,
Ուր թափվել էր վար խուռը, բազմահոծ,
Հրդեհից փախած ժողովուրդն հայոց:

17

Օ, Իսահակյան եղբայր Ավետիք,
Քանի կան կյանքում Թորգոմյան որդիք
Աբուլ Ալաներ չեն պակսիլ կյանքից...
Սիրելի եղբայր, հավատա՛ դու ինձ,
Որ երբ ես տեսա երազիս միջում,

Թե ինչպես քա՛ղցր է, քա՛ղցր է դողանջում՝
Բրդի քարվանը Լեգեոն մեծի
Աբուլ Ալայիդ քարվանն հիշեցի...
Մի՞թե այս բանում մեղավո՞ր եմ ես
Ավո ջան, հոգի՛ս, խնդրում եմ... ներես...
Մի՞թե չգիտես, որ մարդ երազում
Երբեմն հիմար բաներ է ասում:
Ես էլ, երբ որ այդ քարվանը տեսա
«Աբուլ Ալայի քարվանն է սա»
Չգիտեմ ինչու ասացի հանկարծ...
Ախ, չէր մնացել խելքի մի առկայծ
Այդ նվիրական, այդ սուրբ վայրկյանին,
Երբ աչքիս առաջ օրորվում էին
Ձիերը՝ բարձած արյունոտ բրդով
Եվ Լեգեոնը, երբ սուրբ եռանդով
Նրա առաջից քայլում էր հանդարտ...
Նույնիսկ ես տեսա, որ լուսե մի վարդ
Վառվում էր նրա բյուրեղ ճակատին
Ու լույս էր տալիս աշխարհի մութին...
Ես այդ վայրկյանին շա՛տ էի հպարտ,
Որ մեր ազգն ունի այդպիսի մի մարդ:
Ու սիրտս նրան օրհնեք էր ասում
Իմ տարօրինակ, իմ խենթ երազում
Երբ տեսա, որ այդ քարավանը մեծ
Հին Արարատյան դաշտի մեջ կանգնեց:
Եվ ես լսեցի, որ դաշտում այդ մութ
Ջառանցում է մի մեռնող ժողովուրդ...

Ձյուն, բուք էր դաշտում: Գիշեր ու քամի:
Ոռնում էր քամին, փնչում էր ու մի
Մահվան երգ դարձած, ձուլված խավարին,
Գնում էր դիպչում հին Մասիս սարին:
Ախ, ինչե՛ր ասես այդ երգում չկար.
Մեռնող պառավի կանչեր խելագար.
Ձյունը ճանկռտող հիվանդի հառաչ,
Քաղցից անասուն դարձածի բառաչ,
Մանկան մղկտանք, որ նվում է խուլ
Մորթում են կարծես նոր ծնված մի ուլ...
Ու լալիս էին, ու քրքջում էին.
Քրքջում էր քամին, երգում էր քամին,
Նվում էր քամին հուսահատ ու խուլ
Ու այս էր ասում այդ երգը տխուր.
«Մա՛հ է այստեղ. հազա՛ր-հազա՛ր
Հեռանում են ու մարում
Այս անիծված, անհավասար,
Արյունահեղ աշխարհում:
Բուք է այստեղ, ձմեռ ու մուժ,
Մահվան սարսուռ ու քամի
Տեր է այստեղ մահը խուժդուժ՝
Բարեկամ ու թշնամի:
Համրվում են ժամերն անդարձ
Ու աշխարհից ցուրտ ու մութ
Հեռանում է անվերադարձ
Մի արնաքամ ժողովուրդ...»:
Երգում էր քամին, հեծկլտում էր խուլ
Նվում էր կարծես մորթվող մի ուլ...

• * * * * * * * * * * * * * * *

Երբ լսում էի այս խուլ երգը ես
Մի վայրկյան միայն մոռացա ասես
Բրդի քարվանը Լեգեոն մեծի,
Բայց երբ որ հանկարծ նրան հիշեցի
Սրտիցս կարծես հեռացավ մի ամպ
Եվ սիրտս լցվեց անհուն բերկրությամբ:
Դաշտը մի վայրկյան լուսացավ կարծես
Ու սիրտս նորից դադարել ուզեց.
Տեսա, որ դաշտում, անտուն, անկրակ,
Ձյուների վրա պառկած են նրանք,
Ձյուների վրա, և ո՛չ թե հողին,
Ձյուների վրա առանց անկողին...
Ու սրտիս զարկով նորից հիշեցի
Բրդի քարվանը Լեգեոն մեծի
Ու սիրտս նորից շունչ առավ հանդարտ,
Ախ, նրանց համար փրկություն էր այդ...
Եվ ճիշտ որ՝ տեսա՝ վեհանձն, անձնվեր,
Ահա անձնուրաց հերոսները մեր,
Վեհ գործով տարված, մտազբաղ, լռին,
Բուրդ են բաժանում գաղթականներին...
Երկնքից իջած մի հրաշք էր այդ.
Մի վայրկյան չանցած, կամ մի ակնթարթ,
Ես տեսա հանկարծ, որ բոլորն արդեն
Պատրաստվում են, որ տեղերը հարթեն
Եվ մոռանալով ձմեռ ու մշուշ
Անկողին մտնեն ու քնեն անուշ...
Ու սիրտս ճախրեց, որպես մի թիթեռ.
Վայր ընկավ կարծես սրտիցս մի բեռ.
Աշխարհը կարծես լույս դարձավ ու փայլ,
Օրհնե՛նք քեզ հավերժ, Լեգեոն եղբայր...

Այդ անրջական վայրկյանին ես, ա՛խ,
Որբերի քնին շա՜տ էի ուրախ...
Շա՜տ էի ուրախ նրանց հանգստին.
Ուրախ էի, որ նրանք վերստին
Գոնե մի գիշեր քնելու են կուշտ՝
Անո՛ւշ մոռացած զրկանք ու կորուստ...
Երբ հաջորդ պահուն բախտից խելագար
Ես թաց աչքերով նայում էի վար
Դրախտավայել ժպիտը շրթին
Ժողովուրդը իմ քնել էր արդեն...
Ու չկար արդեն ձյուն, ձմեռ ու մուժ.
Ժպիտը շրթին քնել էր անուշ,
Քնել էր հանգիստ ժողովուրդը խեղճ
Եվ իր երկնային երազում անվերջ
Տեսնում էր գուցե նա աշխարհը հին,
Երբ երկրի վրա հոգսեր չկային,
Երբ մարդը ուներ ժպիտներ ու թև
Ու երգը շրթին ապրում էր թեթև...
Նայում էի ես իմ ժողովրդին
Ու դրախտային ժպիտը շրթին
Այնքան քաղցր ու խոր խոմփում էր նա,
Որ ես վախեցա... որ էլ չարթնանա...
Բայց վախս միայն մի վայրկյան տևեց.
Անխուսափ մի միտք սիրտս արևեց.
Օ, թո՛ղ չարթնանա, ասացի ես ինձ.
Գիշեր է դուրսը մի մահու թախիծ,
Գիշեր է դուրսը ու ձմեռ է ցուրտ
Քնի՛ր, օ, քնի՛ր, իմ խեղճ ժողովուրդ...
Ժպտում էի ես այդ ակնթարթին
Ու հանգստացած իմ ժողովրդին
Նայում էի ես երկնի դրախտից
Ու լալիս էի անսահման բախտից...
Ու լույս էր շուրջս, հրաշք էր կարծես.

Հրճվանքից այնպես դողում էի ես,
Որ սիրտս կանգնեց ուրախությունից
Եվ ես, քրտնաթոր, արթնացա քնից...
Արթնացա տեսա՝ անկողնում եմ ես...
Ու սառ ջուր լցրին իմ գլխին ասես:
Ուզեցի ճչամ ու կանչեմ մեկին,
Ուզեցի սեղմեմ աչքերս կրկին.
Գուցե պատահի, որ զարթնումը այս
Մի վայրկյան է սուտ, մի տխուր երազ...
Ու սիրտս ասաց, որ երկրում իմ ցուրտ,
Ուր բուք է, քամի ու գիշեր է մութ
Բոլորը հիմա պառկել են հողին՝
Մերկ... գետնի վրա... առանց... անկողին...
Ու տիրեց սրտիս անհույս մի հուզում,
Կյանքին հավատալ ես չէի ուզում:
Ինչե՛ր չէի տա ես այն վայրկյանին,
Թե երազ դառնար արթնացումը իմ...
Եվ ահա հանկարծ վայրկյանին այդ մութ
Վառվեց իմ սրտում մի կրակ աղոտ.
Մի միտք սկսեց իմ սիրտը հուզել
Եվ սկսեցի ես ինձ համոզել.
«Մի՞թե չգիտես, ասացի ես ինձ,
Որ չի տարբերվում կյանքը երազից:
Միրաժ է կյանքը, երազ ու տեսիլ
Քո այդ երազում դու կյա՛նքն ես տեսել:
Կյանքը աշխարհում մի երազ է հենց,
Օ, ցնդած պոետ Եղիշե Չարենց...»: